Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՆԱՉ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Կանաչ տնտեսության բաժինը (այսուհետ՝ Բաժին) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում:

2. Բաժինն իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, այլ իրավական ակտերով, Նախարարության կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ:

3. Բաժնի կանոնադրությունը հաստատում, փոփոխում և ուժը կորցրած է ճանաչում Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարը (այսուհետ՝ Նախարար)՝ Նախարարության գլխավոր քարտուղարի ներկայացմամբ:

4. Բաժնի կառուցվածքում ընդգրկվում են Բաժնի պետը և Բաժնի աշխատողները:

II. ԲԱԺՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

5. Բաժնի հիմնական նպատակն է՝

1) կանաչ և կայուն տնտեսությանն անցումը:

6. Բաժնի հիմնական խնդիրներն են՝

1) կանաչ և կայուն տնտեսության քաղաքականության մշակում.

2) կանաչ և կայուն տնտեսության շրջանակներում ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումը.

3) կանաչ և կայուն տնտեսության շարունակական զարգացման ապահովումը:

III. ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Կանաչ տնտեսության բաժնի հիմնական գործառույթներն են.

1) կանաչ ու կայուն տնտեսական զարգացման քաղաքականության, կանաչ տնտեսության զարգացմանը նպաստող համապատասխան նորմատիվ իրավական ակտերի մշակումը և իրականացնումը.

2) արևային էներգետիկայի տեխնոլոգիական զարգացմանը նպաստող իրավական ակտերի մշակումը.

3) էլեկտրամոբիլների և էլեկտրական շարժիչներով աշխատող տրանսպորտային միջոցների և հարակից ենթակառուցվածքների ներդրման ծրագրի և անհրաժեշտ միջոցառումների իրականացման մշակումը.

4) բնական ռեսուրսների տնտեսական ցիկլում առավել երկար պահպանման հնարավորությունների, դրանից բխող քաղաքականության և իրավական ակտերի ուսումնասիրումը և մշակումը.

5) կանաչ տնտեսությանն անցման գործընթացում, ըստ անհրաժեշտության, Բաժնի իրավասությունների շրջանակում տնտեսավարող սուբյեկտներին նպաստումը.

6) իրազեկման և ուսուցողական աշխատանքների կազմակերպումը՝ միտված կանաչ և կայուն տնտեսական զարգացման ապահովմանը.

7) կանաչ տնտեսության շրջանակներում կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումների, ուսուցման և վերապատրաստման դասընթացների կազմակերպումը.

8) կանաչ տնտեսությանն առնչվող ոլորտային ռազմավարությունների ուսումնասիրության իրականացումը.

9) կանաչ ներդրումների, ինչպես նաև կանաչ բաղադրիչով նորարարական լուծումներով արտադրության կազմակերպումը խթանող քաղաքականություն և բարենպաստ օրենսդրական դաշտի մշակումը.

10) կանաչ տնտեսությանն առնչվող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով իրեն վերապահված այլ գործառույթների իրականացումը.

11) Նախարարության այլ ստորաբաժանումների հետ համատեղ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների հետ համագործակցելով, Բաժնի

գործունեության ոլորտին վերաբերող օրենքների և իրավական այլ ակտերի նախագծերի նախապատրաստումը.

12) իրավական ակտերով վերապահված՝ Նախարարության նպատակներից ու խնդիրներից բխող այլ գործառույթների իրականացումը:

IV. ԲԱԺՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

8. Բաժնի ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է Բաժնի պետը:

9. Բաժնի պետն անմիջական ենթակա և հաշվետու է Նախարարին:

10. Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը՝ Բաժնի պետի ներկայացմամբ:

11. Բաժնի աշխատողները կարող են ընդգրկվել Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով ստեղծվող միջգերատեսչական հանձնաժողովներում և այլ աշխատանքային խմբերում:

12. Բաժնի պետի և աշխատողների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիրազորությունների, շփումների և նեկայացուցչության խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների հետ կապված դրույթները սահմանվում են նրանց կողմից զբաղեցվող քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով: